ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՐՄԵՆԱԿ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Դանիելյան,

ի պատասխան Ձեր 02.04.2024թ. հ. 72-2024 գրության՝ հայտնում եմ.

Համաձայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից ներկայացված տեղեկատվության՝ Երևան քաղաքի Պռոշյան փողոց հ.11 հասցեին հարակից գտնվող գույքի վերաբերյալ հստակ տեղեկատվություն տրամադրելու համար անհրաժեշտ է քննարկվող տարածքի սխեմա (Google map-ից) և լուսանկարներ:

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասրակական կարգի պահպանության ծառայության կողմից ներկայացված տեղեկատվության՝ աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության աշխատակիցների կողմից կատարված տեղատեսության արդյունքում պարզվել է, որ Կենտրոն վարչական շրջանի Պռոշյան փողոց հ.11 հասցեի ավտոտնակը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Մարտին Հախվերդյանին (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական հ.01072020-01-0219):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ